«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 116-Լ

ք. Երևան 03 Մարտի 2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020 ՄԱՅԻՍԻ 27-ԻՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության մսին օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ մասի, 19-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) կանոնադրության 49-րդ կետի 14-րդ ենթակետի և Ինստիտուտի Գիտական Խորհրդի աշխատակարգի 20-րդ կետի 15-րդ ենթակետի, 77-րդ և 78-րդ կետերի դրույթները՝ Ինստիտուտի Գիտական Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հաստատել «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգ»-ը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 4-ից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված
«ՀՖԿՊՀ» Գիտական խորհրդի
28.02.2025թ. N 116-Լորոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով սահմանվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) ամբիոնի վարիչի (այսուհետ՝ ամբիոնի վարիչ) ընտրության և պաշտոնի նշանակման ընթացակարգը:

2. Սույն ընթացակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, այլ հարակից օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև Ինստիտուտի կանոնադրությունը:

3. Ամբիոնի վարիչի պաշտոնը համարվում է գիտամանկավարժական ընտրովի պաշտոն: Ամբիոնի վարիչը չի կարող միաժամանակ զբաղեցնել ղեկավար պաշտոն Ինստիտուտում կամ այլ մասնագիտական ուսումնական հաստատությունում:

4. Ամբիոնի ղեկավարումն իրականացնում է ամբիոնի վարիչը: Ինստիտուտում նույն անձն իրավունք ունի նույն ամբիոնի վարիչի պաշտոնն զբաղեցնել 5 (հինգ) տարի ժամկետով՝ ոչ ավելի քան երկու անգամ անընդմեջ: Ամբիոնի վարիչը պաշտոնավարում է մինչև 70 տարին լրանալը:

5. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնը համալրվում է ընտրությունը տեղի է ունենում Ինստիտուտի գիտական խորհրդի նիստում՝ փակ, գաղտնի քվերակությամբ:

6. Ամբիոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի վարիչը, իր իրավասությունների շրջանակում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Ինստիտուտի կանոնադրությանը, Ինստիտուտի ներքին իրավական ակտերին և ամբիոնի կանոնադրությանը համապատասխան:

2. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

7. Ամբիոնի վարիչ կարող է ընտրվել այն անձը, որն ունի գիտական աստիճան և կոչում, ինչպես նաև առնվազն հինգ տարվա գիտամանկավարժական աշխատանքային փորձառություն:

8. Ամբիոնի վարիչի մրցույթը նշանակվում է ռեկտորի հրամանով և ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակվում է Ինստիտուտի կայքէջում և սոցիալական էջերում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումի ներկայացման վերջնաժամկետը՝ սույն ընթացակարգի 10-րդ կետի դրույթներին համապատասխան:

9. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար թեկնածուներն առաջադրվում են Ինստիտուտի ամբիոնների, գիտական, հետազոտական (լաբորատորիաներ, կենտրոններ, բաժիններ և այլն) կենտրոնների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

10. Թեկնածուների առաջադրումը դադարեցվում է ընտրությունից 15 օր առաջ:

11. Ամբիոնի վարիչի պաշտոնի համար առաջադրված թեկնածուները Ինստիտուտի Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ

փաստաթղթերը՝

1) ամբիոնների կամ գիտական կամ հետազոտական կենտրոնների կողմից առաջադրվելու դեպքում՝ որոշումը, ինքնաառաջադրման դեպքում՝ Ինստիտուտի ռեկտորին հասցեագրված դիմումը.

2) առաջադրված թեկնածուների գրավոր համաձայնությունները

3) ինքնակենսագրությունը (CV).

4) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթերի (վկայական, դիպլոմ, հավաստագիր և այլն) պատճեն(ներ)ը.

5) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճեն(ներ)ը.

6) տպագրված գիտական, մեթոդական աշխատանքների կամ գյուտերի հաստատված ցանկը.

7) գիտամանկավարժական աշխատանքային փորձառությունը հավաստող փաստաթուղթը (աշխատանքային գրքույկի պատճե),

8) պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ տվյալներ, եթե առկա են.

9) վերապատրաստման կամ որակավորման բարձրացման վկայականների, դիպլոմների պատճենները, եթե առկա են

10) թեկնածուի՝ ամբիոնի զարգացման 5 տարվա ծրագիրը (հայեցակարգ):

12. Ինստիտուտի Մարդկային ռեսուրսների կառավարման և ընդհանուր բաժնի ղեկավարը ամբիոնի վարիչի թեկնածուի վերաբերյալ փաստաթղթերի ընդունման դադարեցման օրից 1 աշխատանքային օրվա ընթացքում գործերը հանձնում է Ինստիտուտի ռեկտորին: Ինստիտուտի ռեկտորն ամբիոնի վարիչի (ների) փաստաթղթային փաթեթները մակագրում է Գիտական խորհրդի քարտուղարին:

13. Ինստիտուտի Գիտական խորհրդի քարտուղարը, փաստաթղթերի համապատասխանությունը ստուգելուց հետո, Ինստիտուտի գիտական խորհրդի (Գիտական խորհուրդ) նիստից (այսուհետ՝ նիստ) առնվազն 10-ն աշխատանքային օր առաջ ամբիոնի վարիչի պաշտոնի համար դիմում ներկայացրած անձանց ցուցակը հրապարակում է Ինստիտուտի կայքէջում և տեղեկացնում թեկնածուներին՝ Գիտական խորհրդի նիստի մասին: Հրապարակվող ցուցակի ձևը տրված է 1.-ին հավելվածում:

14. Ամբիոնի վարիչի պաշտոնի համար առաջադրված կամ ինքնաառաջադրված թեկնածուները կարող են հրաժարվել մրցույթին մասնակցելուց՝ մրցույթից առնվազն մեկ օր առաջ՝ այդ մասին գրավոր դիմում ներկայացնելով Ինստիտուտի ռեկտորին:

3. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

15. (կետն ուժը կորցրել է 28.02.2025թ. N116-Լ)

16. (կետն ուժը կորցրել է 28.02.2025թ. N116-Լ)

17. Նիստում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ (կեսից ավելին), բաց քվեարկությամբ, եթե Գիտական խորհուրդն այլ կարգ չի սահմանում:

Գիտական խորհրդի անդամ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ, սակայն մասնակցում են քվեարկությանը:

18. Նախագահը հարցի քննարկումը սկսում է թեկնածուի (ների) առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկությունների տրամադրմամբ և ներկայացնում է թեկնածուների ցուցակը:

Առաջադրման գործընթացում սույն ընթացակարգի էական խախտումներ[1] ի հայտ գալու դեպքում, Գիտական խորհուրդն իրավասու է հետաձգել նիստը 5 (հինգ) աշխատանքային օրով, իսկ խախտումներ թույլ տված և/կամ անհարգելի պատճառով նիստին չներկայացած անձին կամ անձանց զրկում է մրցույթին մասնակցելու իրավունքից:

19. Նիստին ամբիոնի վարիչի թեկնածուների մասնակցությունը պարտադիր է: Ամբիոնի վարիչի թեկնածուի բացակայության դեպքում վերջինս զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից, բացառությամբ Գիտական խորհրդի կողմից հարգելի համարվող դեպքերի[2]: Հարգելի

բացակայության դեպքում նիստը հետաձգվում է մինչև հարգելի համարվող դեպքերի ավարտի հաջորդ օրը:

20. Նախագահը ծրագրային ելույթի համար, ըստ այբբենական կազմած ցուցակի՝ ձայնը տալիս է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի թեկնածուներին: Ելույթը տևում է 15-25 րոպե: Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո Նախագահի առաջարկությամբ գիտական խորհրդի անդամները և հրավիրված անձինք կարող են հարցեր ուղղել թեկնածուին: Հարցերը սահմանափակվում են նախագահի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

21. Թեկնածուների ծրագրային ելույթներից հետո սկսվում է թեկնածությունների քննարկումը:

22. Յուրաքանչյուր թեկնածության քննարկումը տևում է 5-10 րոպե:

23. Քննարկումների ավարտից հետո թեկնածուներին տրվում է լրացուցիչ ելույթի հնարավորություն մինչև 10-ը (տասը) րոպե տևողությամբ:

24. Ամբիոնի վարիչի ընտրության չափանիշներ կարող են հանդիսանալ՝

1) թեկնածուի (ների) կառավարման, կրթական ծրագրերի կազմման, իրականացման և համակարգման փորձը,

2) ամբիոնի ուղղվածության վերապատրաստման, որակավորման բարձրացման ազգային կամ միջազգային վկայականները, դիպլոմները,

3) գիտական, մեթոդական աշխատանքների կամ գյուտերի արդիականությունը և պրակտիկությունը, ինչպես նաև դրանց հրապարակած հարթակների հեղինակությունը և աշխարհագրական տարածվածությունը:

25. Ամբիոնի վարիչի ընտրությունը Գիտական խորհրդի նիստում անցկացվում է փակ, գաղտնի քվեարկությամբ:

26. Փակ, գաղտնի քվերկության համար քվեաթերթիկները կազմվում են՝ մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող թեկնածուների անունը, ազգանունը այբենական հերթականությամբ լրացնելով (Հավելված 2.):

27. Նախագահի առաջարկությամբ և Գիտական խորհրդի որոշմամբ Գիտական խորհրդի անդամներից ձևավորվում է երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

28. (կետն ուժը կորցրել է 28.02.2025թ. N116-Լ)

29. Հաշվիչ հանձնաժողովն՝ ընտրելու իրավունք ունեցող, նիստին ներկա Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է Գիտական խորհրդի անվանացանկում:

30. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում հաշվիչ հանձնաժողովի արձանագրություն (Հավելված 3.): Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:

31. Վավեր են համարվում այն քվերաթերթիկները, որոնցում «կողմ», «դեմ» կամ «բոլորին դեմ» սյուններում միայն մեկ թեկնածուի անվան դիմաց կատարված է «V» նշումը:

32. Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները, որոնցում կատարված են

1) մեկից ավելի թեկնածուների անվան դիմաց «V» նշումը,

2) քվեաթերթիկում չնախատեսված նշումներ:

33. Ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է Գիտական խորհրդի նիստին ներկա, քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:

34. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները՝ յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին, որից հետո Գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

35. Հաշվիչ հանձնաժողովի արձանագրության տվյալների հրապարակման արդյունքում Գիտական խորհուրդը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ամբիոնի վարիչի ընտրվելու մասին,

2) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) ընտրությունները չկայացած ճանաչելու մասին,

4) ընտրություններն անվավեր ճանաչելու մասին:

36. Մեկից ավելի թեկնածուների դեպքում որևէ թեկնածուի օգտին Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին չհավաքելու դեպքում՝ Գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

1) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու թեկնածուները,

2) հավասար առավելագույն ձայներ ստացած թեկնածուները:

37. Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է սույն ընթացակագին համապատասխան: Կրկնակի քվերկության դեպքում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը հավաքել է Գիտական խորհրդի քվեարկության իրավունք ունեցող և նիստին ներկա անդամների ձայների կեսից ավելին:

38. Ամբիոնի վարիչի ընտրություն(ներ)ը համարվում են չկայացած, եթե

1) ամբիոնի վարիչի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին,

2) կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:

4. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

39" Ռեկտորը ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրված անձի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ Գիտական խորհրդի որոշումը հաստատվելուց հետո: Աշխատանքային պայմանագրի կնքումից հետո պաշտոնում ընտրված անձը մեկամսյա ժամկետում համապատասխան ամբիոնի դեկանի հաստատմանն է ներկայացնում սույն ընթացակարգի 11–րդ կետի 10–րդ ենթակետով նախատեսված ծրագրի հիման վրա կազմված՝ ամբիոնի զարգացման 5–ամյա պլան–ժամանակացույցը, որում ներառված միջոցառումների առնվազն 50 տոկոսը պետք է նախատեսվեն իրականացվելու առաջին 3 տարիների ընթացքում:

40. Ամբիոնի վարիչի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են.

1) ամբիոնի վերակազմակերպման դեպքում,

2) սահմանված կարգով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում,

3) ամբիոնի զարգացման ծրագրի պլան-ժամանակացույցի առաջին երեք տարիների միջնաժամկետ կատարողականը՝ Ինստիտուտի գիտական խորհրդի կողմից բացասական գնահատվելու դեպքում,

4) մահվան դեպքում:

41" Ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայության, ընտրությունը չկայանալու կամ անվավեր ճանաչվելու դեպքերում՝ ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում նշանակել ամբիոնի ՝վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, ով բավարարում է սույն ընթացակարգի 7-րդ կետով ամբիոնի վարիչի թեկնածուին ներկայացվող պահանջներից առնվազն մեկին:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

42. Սույն ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի հաստատումից հետո:

43. Սույն ընթացակարգում կատարվող լրացումներն ու փոփոխությունները, հավելվածները համարվում են սույն ընթացակարգի անբաժանելի մասը:

44. Սույն ընթացակարգով ուժը կորցրած ճանաչել Ինստիտուտի. Գիտական խորհրդի 2009թ. ապրիլի 29–ի նիստին հաստատված «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» ՊՈԱԿ–ի ամբիոնների վարիչների ընտրության ընթացակարգը:

Հավելված 1.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուների ցուցակ					
Հ/Հ	Անուն, ազգանուն	Գիտական աստիճան, կոչում	Պաշտոն	Առաջադրող ստորաբաժանում կամ անձ	Ինքնառաջադրում
1					
2					
3					

Հավելված 2.

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Գիտական խորհրդի _____

ամսաթիվ, նիստի համար

նիստում ամբիոնի վարիչի փակ, գաղտնի քվեարկության

Հ/Հ	Թեկնածուի անուն, ազգանուն	Ամբիոն	Կողմ	Դեմ	Բոլորին դեմ եմ
1					
2					
3					

«Կողմ» կամ «դեմ» լինելու դեպքում թեկնածուի անվան դիմաց քվեաթերթիկի համապատասխան վանդակում կատարվում է «V» նշումը: «Բոլորին դեմ» լինելու դեպքում «Բոլորին դեմ» սյունում կատարվում է «V» նշումը:

Հավելված 3.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Հաշվիչ հանձնաժողովի նիստի

ք. Երևան **« » _____, 20___ թ.**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի _____ նիստում հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է հետևյալ կազմով՝

1. _____

2. _____

3. _____:

Գիտական խորհրդի _____ անդամներից նիստին ներկա էին ___ հոգի: Քննարկվել է (են) _____ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի թեկնածությունը (ները):

Քվեարկությանը մասնակցել են Գիտական խորհրդի ____անդամներ: Բաժանվել է ___քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Հ/Հ	ԹԵԿՆԱԾՈՒ(ՆԵՐԻ) ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ _____:

1. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ -ը ընտրվել է (չի ընտրվել) _____ ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում ամբիոնի վարիչի պաշտոնում, իսկ ներքոնշյալ թեկնածուները՝

1) _____,

2) _____,

3) _____ մասնակցում են կրկնակի քվեարկությանը:

3. Փակ, գաղտնի քվեարկության արդյունքներով _____ ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածու _____ -ը չի ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին կամ կրկնակի քվեարկության արդյունքով թեկնածուները՝

1) _____

2) _____

3) _____

չեն ստացել Գիտական խորհրդի նիստին ներկա քվեարկության իրավունք ունեցող անդամների ձայների կեսից ավելին:
Ընտրությունը համարել չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝ _____

_____

_____

1 Ընթացակարգի էական խախտում են՝ կեղծ փաստաթղթեր ներկայացնելը, դիմելու ընթացակարգը խախտելը:
2 Հարգել ի են համարվում՝ դժբախտ պատահարները, պետական, հասարակական, զինվորական պարտականությունները կատարելը, հիվանդությունը, արտակարգ դրությունը: